

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-2-3-Ա

ք. Երևան

19.02.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի փետրվարի 19-ի նիստում քննարկեց 2024 թվականի փետրվարի 8-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված "Schneider Electric" Joint Stock Company ընկերության (սլ. Dvintsev, d.12, k.1, etazh 6 pom I kom 15 RU-127018 Moscow, RU) «Systeme electric» (IR1680718) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Միջազգային գրանցման մասին ծանուցման մեջ նշված՝ 6-րդ, 9-րդ, 11-րդ, 35-րդ, 37-րդ, 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված «Système electric» նիշը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «Էլեկտրական համակարգ» չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան, քանի որ այն նկարագրական բնույթի է և բնութագրում է ապրանքները և ծառայությունները:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ կոլեգիան հարցի վերաբերյալ ձևավորված կարծիք չունի: Բողոքարկման խորհրդի անդամները քննարկեցին բողոքում ներկայացված փաստերը, որոնք բողոքարկողը ներկայացրել էր իր անհամաձայնությունը հայտնելու համար: Բողոքարկման խորհրդի անդամների մի մասը կողմ էին, որ բողոքը մերժվի և փորձաքննության որոշումը մնա ուժի մեջ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017

թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների և (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված «Système electric» նիշը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «Էլեկտրական համակարգ» չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան, քանի որ այն նկարագրական բնույթի է և բնութագրում է ապրանքները և ծառայությունները: Բողոքարկման խորհրդի անդամների մյուս մասը կարծում էր, որ ներկայացված ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Բողոքարկողի ներկայացուցիչը պնդում էր, որ բողոքը պետք է բավարարվի:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 6 կողմ և 3 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված "Schneider Electric" Joint Stock Company ընկերության «Systeme electric» (IR1680718) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ